

Résumé

DAWIT' TARŌNAC'I
 TRADUCTEUR DU SERMON «SUR LA NATIVITÉ
 DU SAUVEUR» DE ST. BASILE

P. BOGHOS ANANIAN

Dans la littérature arménienne, le nom de Dawit' est mentionné plusieurs fois accompagné de différentes épithètes: «P'ilisop'ay, Anyatt', Hark'ac'i, Nerginac'i, Bagrewandac'i, Tarōnac'i».

Deux opinions principales se divisent le champ de la philologie quant à l'identification de ces personnages. L'une qui attribue toutes les épithètes susmentionnées à la même personne, comme le fait le Père Nersēs Akinian; l'autre qui les distingue. Selon cette opinion, on aurait à faire à quatre auteurs distincts. Le premier, un certain Dawit' P'ilisop'ay qui a vécu dans le dernier quart du V^e et la première moitié du VI^e siècle, et qui était disciple d'Olympiodore le Mineur. Un autre Dawit', qui doit être situé vers la fin du VI^e et les débuts du VII^e siècle, est l'auteur du célèbre sermon sur la Croix «Barjrac'uc'ek'». A ce même Dawit' Nerginac'i appartient aussi, de l'avis de l'A., le sermon sur l'Eglise publié par lui dans «Bazmavep» en 1956 (pp. 63-69, 89-94). Au VII^e siècle, un troisième Dawit' P'ilisop'ay, auteur de trois écrits dogmatiques. Celui-ci était originaire du village de Bagawan dans la province de Bagrewand. Enfin un dernier Dawit', Tarōnac'i, traduit à Damas sur ordre du Curopalate Hamazasp (658-661) le sermon de St. Basile sur la nativité du Sauveur. Cette traduction est publiée ici pour la première fois, avec la collation de quatre manuscrits de la Bibliothèque de St. Lazare.

Dans son introduction l'A. soumet à une analyse minutieuse la langue de cette traduction dressant aussi une liste des néologismes du traducteur, calqués sur le grec.

Le code principal (A) pris pour base de l'édition est daté de 1173. L'éditeur corrige la lecture erronée de la date donnée par Sargisean. Le B est une transcription, probablement, du XVIII^e siècle; il suit de près le A. Le C remonte au XIII^e siècle et présente parfois de meilleures lectures; il peut servir à compléter le code principal, bien qu'il ne manque pas aussi de lacunes. Le D est une collection faite en 1824 de différents manuscrits de la Bibliothèque de Paris. Certaines lectures ont été introduites dans cette édition, suivant l'original grec.

L'A. conclut son introduction en souhaitant que la présente édition puisse apporter également de nouvelles lumières soit à la problématique de l'attribution des œuvres des Dawit', soit à la vérification de l'époque de la traduction des Sermons de St. Basile qui se trouvent dans le même recueil «Pahoc'», lequel a conservé aussi la version du sermon sur la Nativité.

La présente édition de la version arménienne classique du texte de St. Basile et la version en arménien moderne qui l'accompagne, sont dédiées au seizième centenaire de la mort du Saint.

ԿԱՆՈՎԼ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՊԱՐԹԵԻԻ

ԴԱՐՁԵԱԼ ՀԱՐՑՈՒՄՆ ԵՒ ՊԱՏԱՍԻԱՆԻՔ ՆՈՐԱ

(Երուսաղեմի Ս. Յակոբեանց ք. 1912 ձեռագրի բնագիրը)

Հանդուցեալ Նիկողայոս Աղոնցը 1925-1926 թուականներին հրատարակեց այս գրութեանը¹, որ Գալուստ Տէր Մկրտչեանը Դրանից տարիներ առաջ էջմիածնի մատենադարանի մէկ ձեռագրից արտագրելով եւ լուսանցքում նշելով երեք ուրիշ ձեռագրերի ընթերցումները՝ էջմիածնում նրան յանձնել էր 1917ին: Աղոնցը նախաբանում յայտնում է, թէ լաւագոյն ընթերցումները մտցրել է բնագրի մէջ եւ միւսները թողել տողատակում (տե՛ս նրա հրատարակութիւնը, էջ 310): Այդ չորս ձեռագրերը նոր համարներով հիմա գտնւում են Մաշտոցի անուան Մատենադարանում (Երեւան):

Նոյն Մատենադարանի տնօրէն Լեւոն Ս. Խաչիկեանը, ձեռքի տակ ունենալով մի հինգերորդ ձեռագիր, 1964ին Աղոնցի հրատարակութիւնից արտատպեց² նոյն բնագիրը՝ ձեռագրերի հիման վրայ կատարելով «ոչ էական... փոփոխութիւններ» (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», թ. 7, էջ 314): Ըստ այնմ՝

1. Ձեռագրերի հիման վրայ կատարել է «մի քանի ճշգրտման», սակայն առանց ստորագրութեան. ուստի, հաստատ չի կարելի որոշել նախորդ եւ նրա հրատարակութեան բնագրային մանր տարբերութիւնների իսկական աղբիւրը:

2. Տարընթերցումներից նշել է «միայն կարեւորները»:

3. Բնագրից դուրս է հանել սկզբի «Վասն քահանայից եւ աշխարհականաց» երկու հարցումներն ու պատասխանները, բուն բնա-

1. Revue de l'Orient chrétien, 3^e série, t. V (XXV), 1925-1926, Nos 3 et 4.

2. «Բանբեր Մատենադարանի», թիւ 7, Երեւան 1964, էջ 315-328:

սովորական յապաւումներով¹⁵ կամ նշանադրերով հետեւողականօրէն ներկայացուած հետեւեալ բառաձեւերը.

ամեմայն. միշտ յապաւումած ամ, կամ նշանադրով.

աշխարհ. միշտ նշանադրով, որին յաջորդում է հոլովական վերջաւորութիւնը կամ յօդը.

առաքեալ (Պօղոս). միշտ սղադրուած.

Աստուած. միշտ սղադրուած առաջին եւ վերջին տառերով, թէ՛ առանձին եւ թէ՛ բարդ բառերում՝ համապատասխան ածանցով.

բագում. միշտ սղադրուած բզմ, որին յաջորդում է հոլովական վերջաւորութիւնը.

ընդ, ըստ. միշտ սղադրուած՝ առաջին եւ վերջին տառերով. ընդ-ը նաեւ բարդութիւնների մէջ.

թագաւոր. միշտ սղադրուած թագ, առանձին եւ բարդ բառերում.

իշխան. միշտ նշանադրով, թէ՛ առանձին եւ թէ՛ բարդ բառում.

հանապազ. միշտ սղադրուած հնապ.

հարցումն. երկու անգամ լրիւ գրուած. յապաւումած է հարց. կամ հարցո.

նշմարիտ. առանձին եւ բարդ բառերում՝ նշմտ.

մարգարէ. նշանադրով.

մարդ. առանձին եւ բարդ բառերում՝ մդ, մարդո(ն)՝ մդյ(ն).

(գ)մարդիկ. սղադրուած է (գ)մդկ, մարդկան՝ մդկն.

նմա. գրեթէ միշտ նմ, երբեմն լրիւ.

նոսա. միշտ նս.

նորա. միշտ նր.

նոցա. միշտ նց.

որպէս. միշտ նշանադրով.

-ուրիւն ածանցը, յօդով կամ անյօդ, գրեթէ միշտ յապաւումած է սովորական ձեւերով-բոլոր հոլովաձեւերում, ինչպէս՝ -քի = -քիւն, -քիւն = -քիւնն, -քե = -քեան, -քեցն = -քեանցն եւ այլն:

պատասխանի. միշտ յապաւումած պատխի, պտխի, պատասխի (1 անգամ).

պատերազմ. միշտ պտզմ, առանձին կամ բարդ բառերում. պատգմումք = պատերազմումք, պտզմի = պատերազմի.

պատմառ (f). միշտ պտմ(f).

պէս. միշտ պ, առանձին կամ բարդ բառերում՝ նոյնպ = նոյնպէս, պպ = պէս-պէս, որպ = որպէս, այդպ = այդպէս եւ այլն.

սատանայ. երբեմն լրիւ գրուած, միւս անգամներ միշտ նշանադրով, որին յաջորդում է հոլովական վերջաւորութիւնը կամ բարդ բառի ածանցը.

սուրբ. միշտ սք.

վասն. միշտ վս, բացի սկզբի հարցացանկից, ուր լրիւ է գրուած.

վերայ. միշտ վե.

տէր(ն). միշտ տր(ն). տէ = տեառնէ.

Քրիստոս. միշտ սղադրուած իր առաջին եւ վերջին տառերով, որոնց յաջորդում է հոլովական վերջաւորութիւնը:

բ. Բնագրի ուղղագրութիւնը

Կանոնաւոր է աշօրուայ հասկացութեամբ. միայն քե եւ եթե չաղկապները եւ Ե ու Ի ըծորդութիւնների բայերի անկատարի յոգն. Յրդ դէմքը գրուած են Ե տառով, որ դարձրինք է: Մեր սրբագրած տառերը դրինք փակադձերի մէջ (): Գլխադիրները մեծ մասամբ ճիշտ են գործածուած, բացի յատուկ անուններից յաճախ, որ գըլ-խադրեցինք: Կէտադրութիւնը բաւականին կանոնաւոր է, գործածուած են առողջանութեան նշաններ. սակայն կէտադրեցինք արեւելահայերէնի կանոնների համաձայն, ինչպէս ըմբռնեցինք ընագրի ի-մաստը, որ ամէն տողում մինչեւ վերջը նոյն յատակութիւնը չունի: Սուրբ գրական մէջբերումներն առանց չափերտի են եւ առանց մեծատառի:

գ. Փակագծերում նշեցինք ձեռագրի էջերը, ըստ որում նախորդ էջի մէջ բերինք վերջին բառի երկրորդ մասը, որ յաջորդ էջն էր անցել տողադարձի պատճառով (առանց ենթամիայի):

Ահաւաստիկ քնադիրը. ձեռագրի առաջին երկու էջերի որոշ ընթերցողաձեւերի յապաւումների մասին տեղեկութիւններ տուինք տողատակում, որոնք կարող են օգտակար լինել ձեռագրերի ճիւղադրութիւնը պարզելու համար:

15. Միշտ «պատիւ» նշանով, որ այսուհետեւ առանձնապէս չենք նշելու:

(Ձեռ. էջ 628)

ԿԱՆՈՎՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՊԱՐԹԵԻԻ

ԴԱՐՁԵԱԼ՝ ՀԱՐՑՈՒՄՆ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ՆՈՐԱ

(Ս. Յակոբեանց ք. 1912 ձեռագրի բնագիր, Երուսաղեմ)

Հարցումն².

(629)

ա. Վասն քահանայի:

բ. Վասն աշխարհականաց:

գ. Վասն նախանձու:

դ. Վասն ազաւորութեան:

ե. Վասն կենացն յաւիտենից:

զ. Վասն դժոխոցն:

է. Վասն կախարդաց:

ը. Վասն զմարդիկ³ փոխեն յանուն⁴:թ. Վասն կախարդաց, զոր Մովսէս⁵:ժ. Վասն կայենի, որ առանց Աստուծոյ⁶ սպ(ան)⁷:

ժա. Վասն ամլոց որդիս տալ:

ժբ. Վասն հպարտութեան:

ժգ. Վասն որ մեղացն տանջին:

ժդ. Վասն ծնունդը դիւաց:

ժե. Վասն քաջանց լիցն արարածք:

ժզ. Վասն վիշապաց⁸ եւ քաջանց:ա. Քահանայ⁹, որ¹⁰ ընդ կնոջ ի քուն է:Պատասխանի¹¹. Ի վաղիւն աւրինաց¹² (630) եւ պատարագ¹³մի՛ իշխեսցէ մատուցանել¹⁴:բ. Հարցումն¹⁵. Եւ աշխարհական, որ ընդ կնոջ ի քուն է:Պատասխանի¹⁶. Ի վաղիւն աւրինաց մի՛ վիցի հաղորդ:

1 դձ. ՍՅԶ-ում մոռացուել է

2 հարց. այս բառը հաւանաբար վերաբերում է նաեւ միւս հարցումներին

3 գմդկ

4 առանց պատուանշանի, որ հանանաբար կարգաւոր է «յանասուն», ըստ պատասխանի

5 -էս տառերը տողավերեւում են

6 այ

7 սպ, պ-ի վրայ փշիկներ. ըստ պատասխանի կարգացինք «սպան»

8 վիշապ

9 Ք տառը զարդադիր, միւսները գեղարվեստական

10 գլխադրերով

11 պատասխանի

12 Ձեռ-ում (:) է դրուած. հաւանաբար պակասում է «մի՛ վիցի հաղորդ», ըստ բ. պատասխանի

13 նշանադրով

14 մտցլ

15 հարց

16 պոլսի

գ. Հարցումն¹⁷. Ո՞վ է հայր մահու:Պատասխանի¹⁸. Նախանձն:Հարցումն¹⁹. Ո՞ւտոր²⁰ յայտ է:Պատասխանի¹⁶. Յայտանէ. «Նախանձու բանաւորկուն մահ եմուտ յաշխարհ»²¹:դ. Հարցումն²². Եւ ո՞վ է մայր մեղացն:Պատասխանի¹⁶. Ազաւորութիւնն, որպէս²³ ասէն. «Արմատ ա-մենայն²⁴ չարեաց արծաթախրութիւն»²⁵:ե. Հարցումն²². Ո՞վ է, որ տանի ի կեանսն յաւիտենից:Պատասխանի¹⁶. Հեղուկութիւնն, վասն²⁶ որոյ ասէ հոգին սուրբ²⁷, թէ «Յո՞վ բնակեցայց (631) եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս, եւ որք դողան ի բանից իմոց»²⁸:զ. Հարցումն. Եւ ո՞վ է առիթ դժոխոցն²⁹:Պատասխանի. Լրբութիւնն, վասն որոյ ասեն³⁰. ոչ այսպէս ատեաց զանաւրէնն, որչափ զանաւարթն³¹:

է. Հարցումն. Եթէ կարիցեն կախարդը զբնութիւն արարածոց փոխել:

Պատասխանի. Եթէ հաստատել³² կարեն, ապա եւ փոխել կարեն:

ը. Հարցումն. Ահա բազում լուաք, եթէ զմարդիկ փոխեն ի կերպարանա անասնոց:

Պատասխանի. Ոչ ամենայն ինչ, որ առ աշաւք է, ճամարտութիւն ասի, որպէս եւ ոչ ստուեր մարդոյ մարդ ասի: Զնամութիւն (632) եւ գիւրպարանսն կարե(ն) ցուցանել, քայց ճամարտութեամբ ոչ կարեն ցուցանել եւ ոչ փոխել զարարածս արարչին, զի որ արարն, նա միայն կարէ փոխել:

թ. Հարցումն. Նա աւանիկ դիրք ցուցանեն, լիցն առնէին կախարդքն, զոր ինչ Մովսէս առնէր:

17 հարց

18 պատիւ

19 Այս երկրորդական հարցումը համարակալուած է

20 ուտոր փխ. ուտի (*)

21 «աշխարհ» բառի նշանադիր եւ ս յօդ: Մէջբերում՝ «Նախանձու բանաւորկուն մահ եմուտ յաշխարհ» (Իմաս. Բ, 24)

22 Լրբ. գրութեւ, երկու անգամ

23 որպ

24 նշանադրով

25 Մէջբերում՝ «Արմատ ամենայն չարեաց արծաթախրութիւն» (Ա Տիմ. 2, 10)

26 վս

27 սք

28 Մէջբերում՝ «Յո՞ հայեցայց (ովմեմ հանգեայց) եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս եւ որ դողայ (ովմեմ՝ դողան) ի բանից իմոց» (Եսայ. 42, 2):

29 դրժոխոցն, տողատկաբան

30 Այսպէս

31 Նման խօսք չգտանք Սուրբ Գրքում

32 «հաստատ» բառի նշանադիր եւ էլ

Պատասխանի. Ընդ բարբառ բանիցն նայիցիս, թէ ընդ ճըշմարտութիւն իրացն: Թէ արդարեւ որպէս Մովսէսն առնէր ճշմարտութեամբ, ոչ էր պարտ ըզմովսէսի³⁵ արարեալս առնել: Նա աւանդիկ ճշմարտութիւնն զոչ ճշմարտութիւնն յայտ առնեն, զի կանգնէր մի վիշապն եւ գրազում (633) վիշապս կլանէր, եւ աստուեր եւ նմանութիւն եւ տեղի անգամ ոչ երեւէր: Ապա մինչ ի կախարդքն դարձան, հարուածքն, կեղք եւ խաղաւարտք, յայտնի եղեւ աստութիւն նոցա, հարուածքն, կեղք եւ խաղաւարտք, յայտնի եղեւ աստութիւն նոցա, եւ ի հարկէ խոստովան³³ եղեն, թէ «Ձեռն Աստուծոյ է»³⁴: Բայց թէ կարող լինալ էին, զհարուածսն³⁵ ի Մովսէս եւ յԱհարոնն դարձուցանէին:

Հարցումն³⁶. Մովսէսի³⁷ ոչ կարէին առնել ինչ, զի Աստուած ընդ նմա էր. բայց մեղաւորաց կարեն առնել³⁸ չար եւ բարի:

(Պատասխանի). Ոչ միայն մեղաւորաց չեն ձեռնհաս կախարդք բարւոյ եւ չարի, այլ (634) եւ ոչ անասնոց անմտից, բայց զոր Աստուած մատնէ, այլ առանց Աստուծոյ ոչ կարեն սպանանել, զի «Ի տեառնէ են ելք մահու»³⁹: «Սպասէ մեղաւորն արդա(րոյն)»⁴⁰, այլ տէր ծիծա(ղի)⁴⁰ եւ ոչ մատնէ դնա ի ձեռս նորա»⁴¹: Նա եւ ոչ ճնճողուկ անկանի յորոգայթ առանց հրամանի, զի «Ամենայն⁴² ինչ նովաւ եղեւ»⁴³, եւ Աստուծով անցանէ:

Ժ. Հարցումն. Կային առանց Աստուծոյ սպան⁴⁴ զԱբել, եւ սպանողն Կայենի առանց Աստուծոյ սպան զԿային, եւ Հերովդէս՝ զՅովհաննէս. եւ ամենայն արդարքն առանց Աստուծոյ մեռան յանաւորինաց:

Պատասխանի. Զի թէ լինի մարդ առանց Աստուծոյ եւ մեռանի, (635) ոչ պոռնկորդին Աստուծոյ հրամանաւն⁴⁵ լինի, եւ ոչ մեղաւորն Աստուծոյ հրամանաւն մեռուցանէ զարդարն, այլ սատանայ է պատճառք չարեացն: Աստուծոյ հրաշք անքննելի է եւ անհասանելի ամենից, զի որ քննէ զծով, մեռանի⁴⁶: Լինելութեան պատճառ Աստուած է, զի աւրհնեաց ի սկզբանէ զարդարն՝ աճել եւ բազմանալ: Ի մեքենալ արուին յէզն Աստուծոյ հրաման կատարի⁴⁷,

33 Սղազրուած

34 Հմմտ. «Մատն Աստուծոյ է» (եւ. Ը, 19)

35 Ըզհարուածսն, տողասկզբում

36 Համարակալուած է

37 ե-ով

38 Այս բառից առաջ գրիչը գրել է առնն տողի վերջում, սակայն յաջորդի սկզբում նորից՝ առնել

39 Սաղմ. Կէ, 21 «Ի տեառնէ են ելք մահու»

40 արդա (ա-ի վրայ երկու փշիկով).

ծիծա (ա-ի վրայ երկու փշիկով)

41 Հմմտ. Սղմ. ԼԶ, 12-13

42 նշանագրով

43 Հմմտ. Յովհ. Ա, 3

44 սը-պամ, տողադարձ

45 հը-բամամաւամ, տողադարձ

46 Նման խօսք չգտանք Սուրբ Գրքում

47 կտի

լինի աճումն ըստ նախակարգ հրամանի Աստուծոյ: Աստուած է պատճառ լինելութեանն եւ ոչ սատանայ, որպէս ասէ «առանց» Աստուծոյ «եղեւ եւ ոչինչ»⁴³: Սատանայ հրապուրանաց է (636) պատճառ: Նոյնպէս եւ մահու հրաման յԱստուծոյ է. «Յորում աւուր ուտիցես, մեռցիս»⁴⁸: Եկեր եւ մեռաւ: Եկն Քրիստոս եւ ետպան զմահ եւ կենսադործեաց⁴⁹ զմարդիկ⁵⁰: Ինքն Քրիստոս իւրով⁵¹ կամաւն մեռաւ յանաւրինացն⁵² եւ արդարոցն թոյլ ետ մեռանիլ յամբարշտացն, զի ուրախացին յարեալութեանն, որպէս եւ գրեալ՝ «Ընդ Քրիստոսի մեռանին, ընդ նմին եւ թաղաւորեցեն»⁵³: Արդ այն, որք զԱստուծոյ փառս եւ զպատիւ արարչութեանն սատանայի տան, ի հուր գեհենին է ժառանգութիւն նոցա:

Ժա. Հարցումն. Եթէ կարիցեն կախարդք որդիս տալ ամլոց (637) եւ զմէջ սենդուկս բարիս առնել:

Պատասխանի. Ամլութեան բազում պատճառք են, եւ այն, զոր Աստուած արգելեալ է, չէ որ, որ նմայ⁵⁴ ձեռնհաս կարէ լինել, ո՛չ կախարդք եւ ո՛չ բժիշկք: Բայց եթէ պատճառք ցաւոց ինչ իցէ, զայն կարող են բժիշկք⁵⁵ ուղղել Աստուծոյ ազդեցութեամբն դեղովք, ալ առանց Աստուծոյ թէ եւ ամենայն բժիշկք եւ կախարդք՝ ժողովէին, ոչ կարէին Սառայի որդի տալ. զոր ձեռն վերնոյն փակեալ է, չէ որ, որ լուծանէ:

Ժբ. Հարցումն. Դիւահարութեան պատճառ ի՞նչ է մարդկան:

Պատասխանի. (638) Վասն հպարտութեան մարդկան լինի, զի որդի, որ մտաւարժ է եւ իմաստուն⁵⁶, զան ոչ լմայէ, իսկ որ անմիտ է, հանապազ գանալից է:

Ժգ. Հարցումն. Մեղաւորք վասն մեղաց տանջին, իսկ տղայոց անմեղաց զի՞ տիրիցեն դեւք:

Պատասխանի¹¹. Զամենայն մարդ յորդեգրութիւն կոչէ Աստուած, որպէս զԴարայէլն⁵⁷: «Նայէ⁵⁸ որդի եմ⁵⁹ անդրանիկ Իսրայէլ»⁶⁰: Եւ «Որդիս ծնայ եւ քարձրացուցի»⁶¹: Արդ՝ եթէ փակեալքն ընդ աւրինաւ որդիք կոչին, ո՞րչափ եւս առաւել ազատեալքս. զոր ասէ իսկ «Ետ նոցա իշխանութիւն⁶² որդիս Աստուծոյ լինել»⁶³: Արդ

48 Հմմտ. Ծն. Բ, 17

49 կենսագծ

50 Այսպէս

51 ով-ը լուսանցքում

52 ա-ի վրայ իրար կպած երկու օ

53 Հմմտ. Բ. Տիմ. Բ, 11

54 մը-մայ, տողադարձ, ը-ի վրայ օ

նշան այստեղ եւ այլուր

55 բը-ծիկէ, տողադարձ, շ-ն մոռացուած

56 նշանագրով

57 զիւլիմ

58 փա. մա է

59 փա. իմ.

60 իւլ: Հմմտ. եւ. Դ, 22 «Որդի անդրանիկ իմ Իսրայէլ»

61 Հմմտ. Ես. Ա, 2

62 բնադրում «Իշխան» բառի նշանագիր եւ ուրի, լուսանցքում իշխանութի (պատիւով)

63 Հմմտ. Յով. Ա, 12

«Կամակար մտաւք եթէ յանցանիցեմք յետ ընդունելութեան գիտու-
թեան, աշնուհետեւ անապուտ է վասն մեղաց պատարադք»⁹⁷: Եւ
ամենայն ոք, որ քրիստոնեայ է եւ լուսաւորեալ է յաւազանէն հոգ-
ւովն սրբով եւ ապատամբ է յԱստուծոյ եւ ի ձեռս է սատանայի եւ
հալածականս առնէ զսուրբ հոգին յինքնէն եւ զիւրաք վարի եւ պէս-
պէս հմայիւք եւ կախարդութեամբ, այնպիսին չլինի ապաշխարու-
թեան արժանի, եւ չտայ⁹⁹ նմա սատանայ թոյլ ապաշխարել⁹⁸. վասն
այնորիկ զընցան, թէ «Են մեղք, (648) որ մեղք են, եւ է, որ մահու
չափ է»⁹⁹: Ըստ որում եւ վասն Յուդայի ասաց Քրիստոս, թէ «Մինդ
ի ձէնջ սատանայ է»¹⁰⁰: Եւ թէպէտ եւ պողոթեամբն ջանացաւ սա-
տանայ առնել զնա¹⁰¹ բազին, սակայն առանց Քրիստոսի ոչ կարաց
մտանել: Այլ յորժամ ետ զպատառն¹⁰² եւ ասէ. «Արա՛, զինչ առնելոց
ես»¹⁰³, «յետ պատառոյն ապա եմուտ ի նա»¹⁰⁴ սատանայ»¹⁰⁵:

Եւ զիւրաք իսկ, որ տանջէին ի զիւրաց, թէ ոչ պահպանող
զաւրութեանցն պահէր, չարաչար ախտիւն խեղդէին զնոսա: Այլ ոչ
լոկ զիւրաքարն, (649) այլեւ զիւրեանց¹⁰⁶ իսկ պաշտաւնեայն, թէ
ոչ Աստուծոյ ահն պահէր, աղբի աղբի խեղդութեամբք խեղդէին.
բայց չեն ձեռնհաս եւ մտաբերեալ չիչխեն:

Ժդ. Հարցումն. Ծնունդք են զիւրաց եւ մահ, աճեն եւ ապականեն:
Պատասխանի. Նախ զայն տեսցուք, թէ զոյ¹⁰⁷ այլ արա-
րածք բանաւորք քան զհրեշտակա¹⁰⁸ եւ զմարդիկ¹⁰⁹ եւ զգեւս¹⁰⁹, եւ
ապա եկեսցուք յայն, թէ իցեն զիւրաց կէս մարմնաւորք եւ կէս ա-
ռանց մարմնոց: Զի չեն այլ արարածք բանաւորք քան զերեք (650)
ջուկ, աստուածային դրոց եւ ի քնութենէ¹¹⁰ արարածոց յայտ է:
Թէպէտ եւ ասեն յուշկապարիկք¹¹¹ եւ համբարուք եւ պարիկք եւ
պայք, ըստ կարծեալ մտաց մարդկան առին, եւ ոչ ըստ քնութեան,
զի զիւրաց է կերպարանս ցուցանել, եւ մարդիկք զկերպարանս ան-
ուանադրեն: Որպէս յորժամ¹¹² քաղաքք¹¹³ եւ գեաւքք աւերեսցին եւ
անդ դեւք քնակեսցեն եւ կերպս կերպս զանձինս¹¹⁴ ցուցանիցեն, եւ
մարդկան կերպի երեւման անուանս եղեալ՝ կոչեն զոմն (651) յուշ-

97 Հմմտ. եբբ. Ժ, 26

98 ապշիլ

99 Հմմտ. Յով. Ե, 16-17

100 Հմմտ. Յով. Զ, 71

101 Բզ-մայ, տողադարձ

102 Ա տառը ա-ի վերեւում է

103 Հմմտ. Յով. ԺԳ, 27

104 մայ

105 Հմմտ. Յով. ԺԳ, 27 «Եւ յետ պա-
տառոյն ապա եմուտ ի նա սատա-
նայ. եւ ասէ ցնա Յիսուս՝ Արդ որ

ինչ առնելոց ես, արա վաղվադակի»:

106 գիւրց

107 Այսպէս

108 Բզ-հրեշտակս, տողադարձ

109 Բզդեւս, տողապկզբում

110 Բբ-մուքեմէ, տողադարձ, լրիւ դըր-
ուած

111 կ տառը տողավերեւում

112 յորժմ

113 քաղաքիք

114 Բզ-ամձինս, տողադարձ

կապարիկ¹¹⁵, զոմն համբարուք, նոյնպէս եւ դրոց զանուանս նոցա առ
ի նշանակելոյ զսատակութիւն աւերածի աշխարհի, յուշկապարկաց
ասեն բնակել յաւերակս, զի յայն¹¹⁶ լեղուն յուշկապարիկն իշացուլ
թարգմանի:

Արդ ցուցանեն, եթէ զտանին¹¹⁷ իշացուլք ի Բաբելոն¹¹⁸. ու-
րեմն յայտ է, թէ յոկ անուանք են եւ ոչ տեսակք, եւ Գիրք ըստ սո-
վորութեան մարդկան խաւսից անուանեցին զդեւս, որ յաւերակսն
Բաբելոնի բնակեալ (652) են, եւ նոյն աղղեցութեամբ զիւրացն բար-
բանջեն մարդիկն: Զծովացուլն ի կուսէ ասեն ելեալ¹¹⁹, եւ զպայն ի
գետոյ, եւ զարալէզն ի շանէ, եւ զխանդիւռնն ի յիշոյ, եւ զնա-
հանդն¹²⁰ ի ձիոյ: Եւ այդք ոչ եթէ տեսակք ինչ, այլ անուանք եւեթ
են հեթանոսական կուպաշտիցն. զի որք զդեւան պաշտէին ի զիւրացն
հաջէին իբրեւ զշուն¹²¹, եւ նոյն մոլորութեան առվորութիւն կալաւ
զերկեր, եւ ոչ ի քրիստոնէից դարձան ի բաց ի զիւրապաշտ մոլեգ-
նութենէն, (653) եւ ոչ ոք էր յառաջնորդաց, որ հով(ու)էր¹²² ըստ
քարոզութեան աւետարանին: Զայս զիւրք ոչ իմանայ, թէ ի մարմ-
նաւորէ աներեւոյթ ոչ ինչ ելանէ, եւ յաներեւոյթն՝ մարմնաւոր
ինչ. ոչ երբեք ի մարդկանէ ելեալ պայն, զորմէ ասեն, թէ երես
ածէ¹²³, եւ ոչ ի կովուց ծովացուլ եւ ի ծովակի բնակեալ, զի ցա-
մաքային մարմնաւորի ոչ ինչ է հնար¹²⁴ ի ջուրս բնակիլ, եւ ոչ ջրայ-
նոյ՝ ի ցամաքի, եւ ոչ ի իշխան¹²⁵ ինչ եղեալ, թէ ընդ աներեւոյթ
զաւրութիւնս բնակէ կամ¹²⁶ կացցէ: (654) Եւ զոր չէզն կոչեն, թէ
զլիրաւորս¹²⁷ պատերազմի լիզեն եւ ողջանան, այն բարբանջանք
հեթանոսաց¹²⁸ են¹²⁹ եւ պառաւանց առասպելք, մանաւանդ թէ զի-
ւաց իմն մոլորութիւն:

Այլ վիճեալ պնդին, թէ եւ մերումն¹³⁰ զծովացուլ¹³¹ ձայն հա-
նապաղ¹³² լսեմք, եւ ոմն, թէ զպայն իմ աչաւք իսկ տեսեալ է լի-
զելով: Եւ այսպէս յամառին որպէս հեթանոսս, եւ զայն ոչ իմանան,
թէ դեւք լինին ի կերպարանս եւ հանեն ձայն ահագին: Առաքեալ
ասէ. «Սատանայ կերպարանի ի հրեշտակ լուսոյ»^{132ա}, (655) ո՞րչափ

115 յուշկապարիկ

116 Թերեւս փխ. յոյմ (°)

117 Գբ-տամիմ, տողադարձ. -իմ տա-
ռերի մեկանը լուրջուած է

118 Այսպէս

119 Բառասկիզբ ե տառը տողավերեւում

120 Բզ-մահամզմ, տողադարձ

121 ՍՅԶ-ում (էջ 346) «զշունս», որ վրի-
պակ է

122 Խովէր, վ տառի վրայ մէկ կէտով

123 Երեսածէ, մէկ բառով

124 Խբ-մար, տողադարձ

125 նշանագրով. ՍՅԶ-ում (էջ 346)

կարդացուել է «[ի շանէ?]»

126 կ. , միջակէտով

127 Բզ-վիրաւորս, տողադարձ

128 տողի մէջ նշանագրով, իսկ լուսանց-
քում «հեթանոսաց են»

129 նաեւ լուսանցքում. տե՛ս Ծան. 128

130 ՍՅԶ-ում (էջ 346) «մերում»

131 զծովացուլ, տողի վերջին բառն է,
ՍՅԶ-ում «ծովացուլ»

132 Խամպ

132ա Հմմտ. Բ Կորն. ԺԱ, 14

առաւել եւս յանաւնոց կերպարանս՝ ի զարհուրեցուցանել զմարդիկ. ոչ աղբալէս՝ ասեն, այլ յառաջին ժամանակսն զխոցս պատերազմին ողջացուցին լեզուովն: Անմիտ, արդ զի՞ չբժշկեն¹³³. ո՞չ նոյն պատերազմունք եւ արդ են: Ասեն՝ յայնժամ դիցազունք¹³⁴ էին: Արժա՞ն է քրիստովնէից այնպէս վստասել: Զի՞նչ իցեն դիցազունքն. անմարմի՞նք են թէ մարմնաւորք¹³⁵: Յայտ է, թէ մարմնաւոր մարդիկ, զմարդկան¹³⁶ ուրուականս ի պաշտան առեալ՝ դիս անուանեցին: (656) Ապա եթէ անմարմինք¹³⁷ էին, յայտ է, թէ անմարմին(ոյ)¹³⁸ չէ¹³⁹ մարթ թէ ընդ կանայս ամուսնանալ. զի թէ այնմ հնար էր ծնուցանել, բայց ոչ էր հնար. զի որ անմարմին¹⁴⁰ է, նոյն եւ անսերմ է, զի սերմն մարմնաւորաց է եւ ոչ անմարմնոց. զի որպէս ոչ գոյ¹⁴¹ ծնունդք¹⁴² դիւաց, նոյնպէս եւ ոչ գոն¹⁴³ մահ: Թէպէտ եւ անմահ աստուածութիւնն է, սակայն անմահութիւն ընդհանրաց հրեշտակաց¹⁴⁴ եւ որդոց¹⁴⁵ մարդկան: Եւ դիւաց ոչ աճումն ունի եւ ոչ ծախումն, բայց մարդկան է աճումն ամուսնութեամբ եւ մեռանիլ վասն (657) պատուիրանազանցութեան, մարմնով եւ ոչ հոգևով: Եւ այլ արարած ոչ գոյ, որով կերպարանել կարէ, ո՛չ վիշապ եւ ո՛չ այլ ոք, բայց հրեշտակ եւ դեւք:

ԺԵ. Հարցումն. Գաջը աներեւոյթ արարածք են Աստուծոյ. զպատերազմունս նոքա հարկանեն, զորս¹⁴⁶ երէցոց նոքա հարկանեն եւ զարմտիս¹⁴⁷ կալոց նոքա կրեն եւ զգիւնիս¹⁴⁸ ի հնձանաց, որպէս վիշապք զտոհմականս անդեոց¹⁴⁹, ծծեն:

Պատասխանի. Այսպիսի յիմարութեամբ լցեալ է երկիր: Մի՞թէ մարթ իցէ զայսպիսիսն քրիստովնեա(յ) ասել: (658) Ո՛չ քաջ լիեալ է երբեք եւ ո՛չ վիշապ: Վիշապ թառ է. որ ինչ մեծ է յերկրի, վիշապ ասի ըստ գրոց, թէ «Դու փշրեցեր գլուխ¹⁵⁰ վիշապին ի վերայ ջուրց»¹⁵¹: Որպէս մարդ մեծանձն եւ յաղթանդամ տկայ ասի:

ԺԶ. Հարցումն. Ասեն քաջաց եւ վիշապաց տեսրք են լերինս բար-

133 չբժշկեն, տողամիջում
134 Գրիգոր Գրեւ է երկու ց, երկրորդը ջնջել է
135 ՍՅԶ-ում (էջ 346) «մարմնաւոր», եւ մոռացուել են «յայտ է թէ մարմնաւոր» բառերը
136 ըզ-մարդկան, տողադարձ
137 ամմֆ
138 ամմ, որ կարելի է կարդալ «անմարմնոյ» կամ «անմարմնոց»
139 չ տառը ք-ից է սրբագրուած
140 ամմմ

141 Այսպէս
142 ՍՅԶ-ում (էջ 347) «ծնունդ»
143 ՍՅԶ-ում (347) «գոյ ն[մա]»
144 հը-ընշտակաց, տողադարձ
145 ՍՅԶ-ում (347) «որդւոց»
146 ս տառը ք-ի վերելում
147 ըզ-արմտիս, տողադարձ
148 ըզգիմիս, տողադարձ
149 Բնագրում այս ստորակէտը չկայ
150 ըզգիմիս, տողադարձ
151 Հմմտ. Սաղմ. ՀԳ, 14

ձուռնս եւ բնակութիւնք, ու զԱշէկսանդր կապեալ ունին ի Հոռոս եւ զԱրտաւանդ¹⁵² ի Մասիս եւ զԱրուանդ¹⁵³ ի Պետոս եւ ի մառանս:

Պատասխանի. Յորդոց մարդկան կենդանի են Ենովք եւ Եղիա. այլ ամենեցուն զմահ ճաշակեալ (659) է. բայց մոլորութիւն դիւաց խաբեաց զդիցապաշտա Հայոց, թէ զԱրտաւանդ զոմն արգելեալ¹⁵⁴ է ի վիշապաց ի Մասիս եւ է կենդանի եւ նա¹⁵⁵ ելանելոց է եւ զաշխարհ¹⁵⁶ ունելոց: Եւ որում յանմիտ իշխանաց Հայոց հարցեալ զըզճապատումն¹⁵⁷ հմայորականս¹⁵⁸, թէ ե՞րբ լինիցի Արտաւանդա զալ ելանել ի կապանացն, եւ նոցա ասացեալ. «Եթէ ոչ կամիս գերանել նորա, հրաման տուր ընդ ամենայն աշխարհս Հայոց դարբնաց, որ աւր նաւասարդի է, ամենայն դարբին կուսնաւ կոփէ ի վերայ սալի (660) իւրոյ, եւ երկաթք Արտաւանդա(յ) անդրէն հաստատին»¹⁵⁹: Զնոյն հրաման կատարեն. արժամ ամենայն դարբին կոփէ կուսնաւ իւրով ի վերայ սալի: Սոյնպէս մեծացուցանէ սատանայ առ աշաւք զվիշապն¹⁶⁰, զի յորժամ ահադինք երեւեացին, առցեն զնա¹⁶¹ ի պաշտան, թէ նահանգ ինչ իցէ գետոց կամ շահապետ է: Յետ կարծեցուցանելոյն ինքն կերպարանի ստուերածեւ երեւամբ, ահեղածեւ տեսիլ, եւ զարհուրեցուցանել կերպարանի կամ վիշապ կամ նահանգ (661) կամ շահապետ, զի այնիւ զմարդիկ¹⁶² յարարչէն ապստամբեցուցէ¹⁶³, զի թէ էր նահանգ մարմնաւոր, ոչ երբեմն կնոջ պէս յուրանաց¹⁶⁴ անուն անուանին, ոչ մերթ մարդ երեւէր եւ մերթ օձ¹⁶⁵, որով զաւճապաշտութիւն հնարեցաւ¹⁶⁶ մուծանել յաշխարհս: Նոյնպէս եւ վիշապն ոչ միանգամ վիշապ երեւէր, մերթ աւճ, միանգամ մարդ, որպէս ցուցաւ իսկ¹⁶⁷, թէ մարմնաւոր ինչ է, ապա փոխի ոչ: Այլ թէ ի կալս ջրորի ոք¹⁶⁸ երեւին եւ աներեւոյթանան, եւ ի(662) զաշտս երազազ գլին եւ ընդ հետ ընթանան¹⁶⁹ երեոց, դեւք կերպարանին առ ի մոլորեցուցանելոյ զմարդիկ¹⁷⁰:

152 ՍՅԶ-ում (էջ 347) «զԱրտաւանդ»
153 ՍՅԶ-ում (347) «Արուանդ»
154 ՍՅԶ-ում «արգելեալ»
155 նայ
156 ՍՅԶ-ում (347) «աշխարհս»
157 ձեռագրում՝ զզճապատումն
158 Հաւանաբար կարդալու է հմայորական
159 «հաստատ» բառի նշանադիր եւ իմ
160 ըզ-վիշապն, տողադարձ
161 գնայ
162 ըզմարդիկ, տողադարձ
163 ապ-ըստամբեցուցէ, տողադարձ
164 Անծանօթ բառ. Թեթեա ճյուրուա-կանաց (°)
165 Այսպէս՝ օ-ով
166 հը-մարմնաց, տողադարձ
167 Զեռ-ում այս բառից առաջ կէտա-դրական նշան չկայ
168 Այսպէս
169 2-րդ ամ-ը տողամիջում եւ մանր
170 Զեռ-ի էջ 662-663-ում կայ «Հարցումն. Ո՞ր է հարկաւորն, վաթսնաւորն, երեսնաւորն» եւ մէկ «Պատասխանի», որի վերջում՝ «Յի Մաթ (էոսի) աւետարանէն է մեկնած այս բան»: Այս երկու էջ գրուածքը յիշատակուած չէ ՍՅԶ-ում:

